123
L. I. 2.

ՆՈՐ-ԴԱՐ

№ 1 ՀՈՐՈՐԴ ՏԱՐԻ Կիրակի 4 Յունվարի 1887 Կիրակի 4 Յունվարի ՀՈՐՈՐԴ ՏԱՐԻ № 1

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երկու ամսով՝ 3 ր. 50 կ.
Հատով՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրության հասցեն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի ամեն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Հայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։
Հայտարարությունների գաւեն 2 կ., սեռլամների համար կրկնապատիկ։

Ա Զ Դ

Մեր մշտական բաժանորդներից շատերը իւր ժամանակին «Նոր-Դար»-ի բաժանորդագրությունը նորոգած չլինելով, նեղանում են ամեն անգամ որ խմբագրությունս նոր տարին սկսելով, չէ շարունակում ուղարկել իրենց «Նոր-Դար»-ի համարները։

Ներկայ 1887 թուականի «Նոր-Դար»-ի առաջին համարը ուղարկելով մեր մշտական բաժանորդներին, խնդրում ենք, որ շտապեն բաժանորդ գրուել, որպէս զի խմբագրությունս կարողանայ որոշ քանակությամբ համարներ լոյս ընծայել և ըստ պատկանելոյն ուղարկել առանց յետաձգության։

Նոր-Դար»-ի բաժանորդագրությունը շարունակվում է։ Քաղաքական «Նոր-Դար»-ը առաջիկայ 1887 թուականին ստանալ ցանկացողները կարող են և բաժանորդ գրուել Իօլովինսկի պրօսպեկտի վերայ Թիֆլիսի կլուբի դիմաց՝ ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ ԴԻՊՈՅՈՒՄ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող. — Քաղաքական արդի դրության առիթ։
Քրոնիկոն. — Լուրեր։ Երկու խօսք։
Թղթակցություններ.—Կ. Պօլիս։
Քաղաքական. — Լուրեր։
Խառն Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Հայտարարություններ։

Թիֆլիս, 3 Յունվար 1887

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻ ԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

—

Անցեալ 1886 թուականը վերջացաւ խաղաղության պահպանության յուսով և ընդհանուր պատերազմի երկիւղի մէջ ատամնուելով։ Այնուամենայնիւ, մինչև օրս էլ ընդհանուր խաղաղությունը չէ խանգարուած, թէպետև այդ խաղաղությունը աւելի թանկ է նստում Եւրոպային քան պատերազմը։

Ներկայ 1887 թուականին էլ եւրոպական պետությունների արտաքին յարաբերությունները ընդհանրապէս անորոշ են մնացել։

Այդ յարաբերություններից և պետությունների միմեանց ներհակ շահերից ծագած խնդիրները մանաւանդ բօլղարական գործերի վերաբերությամբ դեռ իրենց լուծումն չեն ստացել։

Այսօր էլ Եւրոպան զբաղուած է բօլղարական խնդրով, այսօր էլ Բօլղարիայի այժմեայ կառավարիչները իրենց նորանոր արարքներով և հնարքներով զարմացնում են աշխարհը և դիպլօմատիային չեն թողնում, որ հանգիստ շունչ քաշէ։

Բօլղարական կառավարիչների հնարքներից մէկն էլ եւրոպական մայրաքաղաքները ուղարկած պատգամաւորությունն է, երբ դրանք արդէն Դանիայի մի պրինցին բօլղարական գահի համար իշխան ընտրելով, բաւականին զբաղեցրել էին եւրոպական կառավարությունները։

Ի հարկէ այդ ամենը կատարուել է միմիայն ժամանակ վաստակելու համար։

Որքան էլ որ բօլղարական կառավարիչները իրենց արարքներով ձգտում լինին եւրոպական ընդհանուր խաղաղությունը խանգարելու, բայց և այնպէս դժուար թէ Բօլղարիայի պատճառով ընդհանուր պատերազմ բացուի։

Արդէն ինքն իշխան Բիսմարկը վերջերումս գերմանական ազգային ժողովում (բալխատագում) յայտնեց, որ Բօլղարիայի համար Գերմանիան պատերազմ չի անիլ, թէ Ռուսիայի բարեկամությունը նրա համար շատ թանկ է և թէ գերմանական կառավարությունը աշխատում է պահպանել պետությունների մէջ խաղաղությունը միջամտելով։

Այստեղից արդէն պարզ է, որ Գերմանիան Ռուսիայի հետ իւր բարեկամական կապը անխախտ պահպանելով, ամենևին մտադիր չէ Ռուսիայի դէմ գնալու Բօլղարիայի համար։

Հետևաբար նրանք, որոնք շատ հետաքրքրվում են այն նշանաւոր խնդրով, որ ամբողջ աշխարհին է վերաբերում, ըստ որում դա կենսական խնդիր է, այսինքն պատերազմի և խաղաղության խնդրով, պէտք է որ հանգիստ լինին և ընդհանուր խաղաղությունը ապահովուած համարեն։

Բայց արդեօք այդպէս է, մթէ այլ ևս պատերազմի վտանգ չը կայ։

Մենք այնպէս ենք հաւատացած, որ խաղաղությունը կարելի է ապահովուած համարել, եթէ պատերազմի վտանգը Բօլղարիայից ծագում լինէր։

Մեր կարծիքով ընդհանուր և բարձր քաղաքականության մէջ բօլղարական խնդիրը երկրորդական խնդիր է և դա չի կարող պատերազմի պատճառ լինել, այլ աւելի հաւանական է, որ դա այլ և այլ հանգամանքներում պիտի ծառայէ դէպի պատերազմ մղող պետությունների ձեռքում իբրև պատրուակ։

Ասացինք, որ Գերմանիան և Ռուսիան միմեանց հետ բարեկամ մնալով, Բօլղարիայի համար չեն ուզում պատերազմել, այլ իւրաքանչիւրը իւր կողմից աշխատում է խաղաղության պահպանության համար։

Ուրեմն հրաժեղից է վտանգուած ընդհանուր խաղաղությունը։ Ի հարկէ անգլիական կառավարության գլուխ մարքիզ Սալսբիւրիի կամ աւստրիական արտաքին գործերի մինիստր գրաֆ Կալնօկի անցեալում աւստրիական դեսպաններին խօսած գրգռիչ ճառերից չէ վտանգուած ընդհանուր խաղաղությունը։

Եւրոպական խաղաղությունը վտանգուած է այն դրությունից, որ անցեալներս տիեզերահռչակ գերմանական ռազմագէտ Մօլտկէն գերմանական ազգային ժողովում խօսած ճառի մէջ մի քանի խօսքով նկարագրեց։

Այդ դրության պատճառը Բօլղարական խնդիրը չէ։

Գրաֆ Մօլտկէն ասում է. «Ամբողջ Եւրոպան մինչև վիզը զինուած է, ամբողջ Եւրոպան զինուած է դարձել. որ կողմն էլ շուռ գանք՝ մեր դրացիները զինուած են և այն չափով, որ ամենահարուստ երկիրն էլ կարող չէ երկար ժամանակով տանել այդ դրությունը. բնական է, որ այդ հանգամանքը շուտով պիտի տանի դէպի որոշումը...

Պարզ լեզուով ասած գրաֆ Մօլտկէն ուզում է ասել, որ իւրաքանչիւր մեծ պետությունն միւսին նայելով զինվում է ի վնաս իւր երկրի ոյժերին, հետևաբար եթէ պետությունները համաձայնությամբ չը դադարեն զինուելու և չսկսեն սակասացնել զօրքերի թիւը, զինու զօրությամբ պէտք է լինի այդ։

Այդ խնդիրը մնում է Եւրոպային վճռելու ներկայ 1887 թուականին։ Մի մեծ խնդիր։

Ս. Ս.

ՔՐՕՆԻԿՈՆ

Անցեալ դեկտ. 29-ին, ինչպէս հաղորդել էինք, հայոց դերասանական խումբը խաղաց ա. Գոհարիկի օգտին Մուրացանի պատմական «ՌՈՒԶԱՆ» դրաման։ Թատրոնը լիքն էր, թէպետև պաղ բռնելու օր լինելով, քաղաքացիներից շատերը այդ երեկոյեան տրնից չդուրս գալու սովորությունը պահպանում են։

Բազկաթոռների և աթոռների վերայ բազմած էին բաւականին մուով միջին դասի պատկանող հասարակութիւն, իսկ օթեակներում զարմանքով նկատեցինք մեր արիստոկրատուհիներից, ըստ որում պիէսան տեղական արդիւնաբերություն էր։

Ազամեանը չէր խաղում, նրա գերը սիրող հանդիսատեսը չէր կարող ասել և բավականություն ու լեզուի վերաբերմամբ գոնէ նայելով առաջին համարին, որ պէտք է աւելի խնամով պատրաստած լինէր։ Լեզուն, ի հարկէ, արևմտեան հայ բարբառով է, որ շատ անգամ բոլորովին անհասկանալի է արևելեան բարբառը գործածող հայերի ստուար մեծամասնության համար, մանաւանդ դժուար հասկանալի է վենետկի և վիեննայի Մխիթարեան հայրերի գործածած աչխարհաբառը—բազմաթիւ գրաբառ խրթին խօսքերով, դարձուածներով և նախդիրներով համեմուած լինելուն համար։ Իսկ բավանդակության կողմից ամսագիրը նախանձելի դրության մէջ չէ—եթէ առաջին համարի նման կազմուին և մյուս համարները։

Հանդէսը դուրս է գալիս իւրաքանչիւր ամսուայ սկիզբը 16 երեսից բաղկացած։

Մենք, եթէ պատահի հետաքրքիր յօդուած, իւր ժամանակին կը ծանօթացնենք մեր ընթերցողներին նրա հետ, իսկ այդպիսի բան դեռ ևս չկայ առաջին համարում։

—

1888-ին Թիֆլիսում գիւղատնտեսական ցուցահանդէսի ծրագիր կազմելու համար Նուկասի գիւղատնտեսական ընկերության ընտրած ժամանակ ժողովը արդէն կազմել է ծրագիրը. ցուցահանդէսի համար բոլոր ծախսերը հաշուած են 30,000 րուբլի։

—

ԿԱԽԻԱ մեզ գրում են.—Ներկայումս այստեղ վաճառականությունը շատ լաւ դրության մէջ է գտնվում։ Տեղական գլխաւոր արդիւնաբերությունն են՝ չորացրած միրգ, բուրդ, բուժուժ և այլն։ Վաճառականությունը գլխաւորապէս հայերի ձեռքին է։ Տեղս գտնվում են բաւական քանակությամբ հայեր. նրանք ունին մի քարաշէն եկեղեցի. ուսումնարան չունին, բայց ինչպէս լսում ենք, մտադրություն կայ մօտ ապագայում բանալու մի լաւ ուսումնարան։

—

«Նոր-Դար»-ի չորրորդ տարեշրջանը մանելու և նոր տարու առթիւ թերթիս խմբագիրը ամեն կողմերից շարունակ ստանում է բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ և նամակներ։ Թերթիս խմբագիրը անկարող գտնուելով ամեն մէկին առանձին առանձին պատասխանելու, սրանով յայտնում է իւր շնորհակալությունը։

—

ԲԱԳՈՒԻՑ Ա. մեզ գրում է.—Բագուի հայերն ևս զերծ չեն այն պակասութիւններից, որ ունին չափազանցները։ Դրանք ևս հարստանիքի և ինքնօգնության ժամանակ երթելու համար հասարակաց տներից թուրքի կանայք են բերում, որոնք իրենց անվայել և անճոռնի վարմունքներով, բոլորովին գլխից հանում են խեղճ երիտասարդներին։ Շատ ժամանակ, մինչև անգամ այնպիսի մարդիկ էլ են լինում, որոնք այդ կանանց հետ զանազան անվայել չարժմունքներ անելով պարում են. և այդ անում են բազմաթիւ պատուաւոր կանանց, մատաղահաս օրիորդների և մարդիկների ու երիտասարդների ներկայութեամբ։

Բացի դրանցից, այդ անբարոյական կանայք ազատ նիստ ու կաց ունին

Ի ՄԻՋՈՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՐՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԱՐԱՐԱՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԱՐՇԱԿՈՒՆԻՔԸ

Ա.

Ամեն ազգ, որ ուզում է ապրել, պարտավոր է ունենալ իր պատմությունը, որ ցույց տա, թե ինչպես է նա ապրել, ինչպես է զարգացել, ինչ ուժեր է ունեցել, ինչ ուժեր է կորցրել, ինչ ուժեր է ձեռք բերել, ինչ ուժեր է ցանկանում ձեռք բերել, ինչ ուժեր է պետք ձեռք բերի, որ կարողանա ապրել։ Ամեն ազգ, որ ուզում է ապրել, պարտավոր է ունենալ իր պատմությունը, որ ցույց տա, թե ինչպես է նա ապրել, ինչպես է զարգացել, ինչ ուժեր է ունեցել, ինչ ուժեր է կորցրել, ինչ ուժեր է ձեռք բերել, ինչ ուժեր է ցանկանում ձեռք բերել, ինչ ուժեր է պետք ձեռք բերի, որ կարողանա ապրել։

գամաւորների ձայներից. բայց ամենից առաջ ես պարտական եմ ճշմարտութիւնը ասելու: Օրինագիծը ամենևին Ռուսիայի հետ նախատեսած պատերազմի պատճառով չէ դուրս եկել, մենք Ռուսիայի հետ ունինք նոյն բարեկամական յարաբերութիւնները, ինչպես էր հանգուցեալ Կայսրի օրով, և ոչ մի կերպով մենք չենք խանգարիլ նրան: Ես չգիտեմ, բայց նոյն իսկ ձեզանից էլ ոչ ոք կարող չէ ցոյց տալ, թէ ինչ շահ կայ մեզ՝ Ռուսիայի հետ կռուելուց: Բարբարոսութիւն կլինէը լոկ կռուի ցանկութիւն ունենալու պատճառով պատերազմելը, որ արժանի չէ Գերմանիային: Այսպէս ուրեմն, մենք չենք խանգարիլ Ռուսիայի հետ մեր խաղաղութիւնը, բայց Ռուսիան էլ, ես կարծում եմ, նոյնպէս ձեռնպահ կը մնայ այդ բանից: Ես նոյնպէս չեմ կարծում, որ Ռուսիան դաշնակիցներ պատրաստէ կամ ուրիշ պետութիւնների հետ յարաբերութեան մէջ մտնելիս լինէը—համերաշխութեամբ Գերմանիայի վերայ յարձակուելու համար: Ալէքսանդր III Կայսրը միշտ քաջութիւն է ունեցել իւր կարծիքը պարզապէս յայտնելու, և եթէ նա ցանկանար Գերմանիայի հետ թշնամական յարաբերութիւնների մէջ մտնել, նա Ինքը կը յայտներ առաջինը և գործով էլ ցոյց կը տար: Ով որ պատիւ է ունեցել նրա հետ մօտ յարաբերութիւններ ունենալու, նա կարող է վստահել նրա վերայ: Խընդրի գժուարութիւնը ամենևին Գերմանիայի և Ռուսիայի մէջ խաղաղութիւնը պահպանելու մէջ չէ, այլ Ռուսիայի և Աւստրիայի մէջ, որովհետև այստեղ գործ ունինք արդէն բոլորովին հակառակ շահերի հետ: Մենք միջնորդի դեր վեր առինք մեր վերայ, որ նոյնպէս գժուար դեր է, ոլովհետև հարկաւոր է ընդդիմադրել ռուսական և աւստրիա-ունգարական մամուլների գրգռեցուցիչ գործունէութիւններին, ինչպէս և աւստրիա-ունգարական պատգամաւորների ժողովներին:

Այստեղ, ի հարկէ, վտանգ կայ մեզ՝ Ռուսիայում աւստրոսէրի, իսկ Աւստրիայում՝ նամանաւանդ Ունգարիայում՝ ռուսոսէրի անուն ժառանգելու, բայց մենք սիրով կը համաձայնինք այդ բանին, միայն թէ մեզ յաջողուէը խաղաղութիւնը պահպանել Գերմանիայի և Եւրոպայի համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Հրատարակուած է 1887 թուի պետական ելևմուտի հաշուեկշիռը: Պետական սովորական մուտք հաշուած է ընդ ամենը 793,118,046 ր., իսկ սովորական ծախսերի ընդ ամենը— 829,676,680 րուբլի. դէֆիցիտը հասնում է 36,558,634 րուբլու: Բացի դրանից հաշուեկշռի մէջ նշանակուած են և արտաքոյ կարգի ծախսեր 48,414,194 ր.—երկաթուղիներ և նաւահանգիստներ շինելու համար, որոնք, ինչպէս և դէֆիցիտը, սպիտի ծածկուեն դանձարանի արտաքոյ կարգի աղբիւրներից և փոխառութեան օպէրացիաներից: Բարձրագոյն անուն արուած զեկուցման մէջ ֆինանսների մինիստրը բացատրում է, թէ 36½ միլիոն դէֆիցիտը անտեսական ճգնաժամի և դրանից էլ ինչպէս մասնաւոր, նոյնպէս և պետական եկամուտների պակասելու անխուսափելի հետևանքն է. գործութիւն ունեցող հարկերը բարձրացնելը կամ նոր հարկեր նշանակելը անյարմար կը լինէը և թէ դէֆիցիտը ամբողջապէս ծածկում է դանձարանի աղբիւրների դրամով: Իսկ ինչ վերաբերում է մօտ 48 միլիոն արտաքոյ կարգի ծախսերին, դա բացառապէս շահաբեր ծախսերին է վերաբերում:

Այնուհետև ֆինանսների մինիստրը բացատրում է, որ դէֆիցիտի նշանակութիւնը ճշտութեամբ որոշելու համար պէտք է աչքի առաջ ունենալ, որ պետական պարտքերը գեղջելու համար 1887-ին նշանակուած է 52 միլիոն րուբլի, որ նա զգում էը եկամտի նոր աղբիւրները գանելու անհրաժեշտութիւնը, և որ ուսումնասիրել է հայային օրէնքի և ծխախոտային նշանաձղթի արքունական մենաւաճառութեան հարցերը: Ֆինանսների մինիստրի կարծիքով, կոսկոծելի է, որ գինու արքունական մենաւաճառութեամբ հնարաւոր լինի գինեվաճառների օգուտներն արքունի եկամուտ շինել, և թէ շահի այն մասը, որ գինեվաճառները մանր չափերով վաճառումը ի չարն գործ գնելով են ստանում, գանձարան չի մտնիլ, այլ կը գառնայ միայն պետական այն գործակալների եկամտի աղբիւր, որոնք չեն արգարացնում նրանց վերայ դրուած հաւատը: Ծխախոտի մենաւաճառութիւնը անկասկած, կաւելացնէ պետական եկամուտները, բայց չը պէտք է մեծ յոյսեր դնել նրա վերայ էլ. իսկ երկաթուղիները կառավարութեան ձեռքն առնելով շահուելու հարցի վերաբերմամբ ֆինանսների մինիստրը կասկածում է, որ մասնաւոր երկաթուղիները պետական գործնեելով միանգամից հարստացնեն գանձարանը.—մեծ օգուտներ բերող գծի համար հարկաւոր կը լինի վճարել պայմանական ժամանակով որոշուած կուպոնների վճարները, իսկ քիչ օգուտ բերողներին էլ թէև քիչ կը վճարուի, բայց մի շատ օգուտ էլ սպասել չի լինիլ նրանից շուտով: Նպատակ մեծ հարկեր նշանակելն էլ անյարմար է և աւելորդ, որովհետև երբ աւելի յարմար ժամանակ հասնի և գիւղատնտեսական ճգնաժամը պակասի, կկսուի և պետական մուտքերի աճումը: Ի վերջոյ, ֆինանսների մինիստրը կանգ է առնում հետևեալ փաստերի վերայ. 1) Անմիջական հարկերի բաբեփոխութիւնը և գլխահարկի բարձումը կարելի է վերջացած համարել. 2) Գլխահարկի բարձումը անյագրային գրութեան մէջ փոփոխութիւններ է մացնում տեղագրութեան և հաւաքական երաշխաւորութեան մասին (նոր անցագրի նախագիծը արդէն կազմուած է և քննւում է առանձին խորհրդում. քաղաքացի կամ գիւղացի տեղագրութեան մասին կանոնները մշակւում են, իսկ հարկավճարութեան համար հասարակական երաշխաւորութեան մասին՝ տեղեկութիւններ են հաւաքւում). 3) Մի քանի, հարկից ազատ գոյնագրութեան առարկաների վերայ կարելի է հարկ դնել միայն այն ժամանակ, երբ գիւղատնտեսական ներկայ ճգնաժամը մի փաքը կը թուլանայ. 4) Տամծնելի հարկի չափը արմատական փոփոխութեան ենթարկելու հարկ չկայ: Վաճառականութիւնն ու արդիւնագործութիւնները օժանդակելու համար ընդունուած են և ենթադրւում են հետևեալ միջոցները. 1) 1886 թուին պետական բանկը իւր գործողութիւնները սկսաւ և Լեհաստանում բացեց 13 նոր գրասենեակներ և մասնաճիւղեր, բացեց 229 նոր խնայողական գանձարաններ, իսկ բոլոր 555 խնայողական գանձարաններին յանձնուած փողերի գումարը աւելացաւ 26-ից 41 միլիոն րուբլու. 2) Պետական բանկի հասարակշռութեան մէջ չափազանց մեծ նշանակութիւն ունեցող փոփոխութիւն է մացրած.—Բանկի լիկվիդացիոնական գործողութիւնների և մուտը անցրած է պետական գանձարանի հաշիւների մէջ, որից 1887-ի համար ժամանակաւոր եկամուտ նկատում է 23 միլիոն րուբլի. 3) Ազնուականական հողային բանկը 32 նահանգների համար բացել 25 ճիւղեր, նպատակ 2331 գործեր օժանդակութիւն նշանակել 70 միլիոն րուբլի. 4) Փիւղական բանկը 86-ին բացել 7 նոր ճիւղեր և այժմ գործում է 34 նահանգներում. փոխարուած գումարների ընդհանուր գումարը հասաւ 42 միլիոն րուբլու: Վերջացնելով իւր ամենախնամ ուշադրութիւնը դարձրել է ֆինանսների մինիստրը ուղղութեան վերայ, որ ծանր ճգնաժամը ոչ միայն պետական եկամուտների վերայ ազդեց, այլ և արտահանուող ապրանքի քանակի վերայ, որ միանալով քաղաքական խճճումների հետ, մեծ ազդեցութիւն ունեցաւ ռուսական մուրհակների (վեքսել) և արտասահմանեան ռուսական արժէթղթերի վերայ, թէև մինչև դեկտեմբերի 1-ը ռուսական հաւասարակշռութիւնը կարելի չէ անդոհացուցիչ համարել, որովհետև արտահանուած ապրանքների արժէքը 23 միլիոն րուբլի աւելի է ներմուծուածների գներից: Բայց այդտեղ կայ և անհանգստացնող կողմ, այդ այն է, որ արտահանուող ցորենի արժէքը առաջին 10 ամսուայ մէջ 66 միլիոն ր. պակաս է քան անցեալ տարի. նոյն 10 ամիսներում ներմուծուած է 6½ միլիոն րուբլու աւելի քան անցեալ տարի: Թէև այս փաստերը և վերջի ամիսների եկամտի աւելանալը գեռ չեն ապացուցանում որ վճռապէս դէպի լաւն են փոխուել, բայց, գոնէ հաստատ են պահում այն համոզման մէջ, որ ներկայ անտեսական դժուարութիւնները արդեսահիմ չեն լինիլ Ռուսիայի դարգացման, որ հարստութ է բնական արդիւնքներով և ժողովրդի հաստատ հոգուովը, որ նախախնամութիւնը յանձնել է կայսերական Մեծութեան խնամքին:

1 Յունվարի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Թիֆլիսի դատաստանական պալատի անդամ Միխայլովը ստացել է իսկական աւագ խորհրդականի աստիճան: Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ նախագահ Գոնչարովին շնորհուած է ս. Աննայի I չքանչան և Անդրկովկասեան Մուֆթի Հաւսէյն Էֆենդի-Վամբովին ս. Վլադիմիր 3-րդ աստիճանի:

Բարձրագոյն հրովարտակով սենատին հրամայուած է լինել.—արդարադատութեան մինիստրութեան դործերի կառավարիչ Մանասէինին—արդարադատութեան մինիստր, պետական խորհրդի անդամ վերնագրատպութեան—ֆինանսների մինիստրութեան կառավարիչ, ֆինանսների մինիստր Բունգէին—պետական խորհրդի անդամ և մինիստրների խորհրդի ներկայացուցիչ, կայսերական գլխաւոր անտառների հրամանատար Բիլխաէրին և ֆինանսների մինիստրի օգնական Նիկոլայեվին—պետական խորհրդի անդամ: Տուլայի նահանգապետ Ուշակովը և Պենզայի նահանգապետ Տատիշչեվը ձերակոյտի անդամ են նշանակուած: Մինիստրների խորհրդի նախագահ Ռէյտէրնին բարձրագոյն հրովարտակով չնորհուած է թանկագին ակներով զարդարուած Նորին Մեծութեան պատկերը՝ անդրէասեան ժապաւէնով կախելու համար: Միևնոյն ժամանակ աւագ քարտուղար Բէյտէրնը արձակւում է մինիստրների խորհրդի նախագահի պաշտօնից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Բարձրագոյն ընծաներ չնորհուած են—օրէնքների դեպարտամենտի նախագահ բարօն Նիկօլային ս. Անդրէաս Նախավկայի ասպիճանը բարձրագոյն հրովարտակով:

«Journal de St Petersbourg»-ման. Նայոյց անելով Բիսմարկի և Ֆրանսիական սենատի նախագահ Կարնօի ճառերի վերայ, մատնացոյց է անում ամեն տեղ էլ արտայայտուող խաղաղասիրական միտումների վերայ, որ բոլոր պետութիւններն էլ արտայայտել և ամրացրել են միևնոյն բառարօթեամբ, Լրագիրը խօսում է Ֆլուրանսի և Դօբլէի բոլղարական պատգամաւորներին ասած իրաւացի խօսքերի վերայ, և ի վերջոյ յայտարարում է, որ այս ամենը խաղաղութեան և հանգստութեան անժխտելի ապացոյցներ են, և սկսուող նոր տարին չի խարիլ իւր չատ բան խոստացող երևոյթներով:

2 Յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Այսօր ներքին 1-ին փոխառ. վիճակահանութեան տանող տոմսերի գլխաւոր գումարները են:

№ սերիայի	№ տոմսի	Տարած գումարը	№ սերիայի	№ տոմսի	Տար. գումարը
3,199	20	200,000	4,379	17	
8,853	13	75,000	12,728	18	5
10,330	9	40,000	7,832	21	
1,845	44	25,000	12,600	47	
4,671	9	10,000	16,991	40	3
493	41	10,000	11,654	14	
9,418	22	10,000	7,589	46	
1,492	32		9,333	6	4
11,836	46		10,915	16	
4,522	26		15,861	41	3
18,504	32		3,517	44	
12,300	18		13,711	33	-
7,759	5		13,189	22	
14,696	31		19,076	40	
13,206	17		8,386	47	
3,384	9		15,476	39	1,000
5,304	20		9,015	13	
9,524	28		14,860	12	
11,113	15		1,553	1	
19,554	29		4,814	33	

5,000-ական 8,000-ական

ՊԱՐԻԶ. Պատգամաւորների ժողովի նախագահ Ֆլօկէն նատի բացման միջոցին արտասանեց մի ճառ, որի մէջ քաղաքական բոլոր կուսակցութիւններին հրաւիրում է համաձայնութեան, որ անհրաժեշտ է նոյն իսկ այն պատճառով, որ այդ դէպքում Ֆրանսիան կը վայելէ հարևանների յարգանքը: Սա խաղաղութեան անհրաժեշտ պայմանն է, որ նոյնքան հարկաւոր է Ֆրանսիային, որքան և մնաց պետութիւններին: Ֆինանսների մինիստրը յայտարարեց, որ 1887-ի բիւդջէի մէջ մտցրած է զինուորական արտաքոյ կարգի ծախս 86 միլիոն ֆրանկ, որից 71 միլիոնը նոր հրացաններ պատրաստելու համար է, իսկ 15 միլիոնը զինուորանոցների և բերդերի համար:

Լրագիրները Բիսմարկի ճառը բացատրում են խաղաղասիրական իմաստով. նրանք այդ ճառից տեսնում են, որ Գերմանիան միտք չունի Ֆրանսիայի վերայ յարձակուելու, և ասում են, որ Ֆրանսիան էլ մտադիր չէ Գերմանիայի վերայ յարձակուելու:

ԲԵՐԼԻՆ. Բայեստագը 186 ձայների մեծամասնութեամբ 154-ի դէմ, ընդունեց ազատախոհների առաջարկութիւնը—կառավարութեան պահանջած զօրքերի յաւելումը՝ 3 տարով միայն հաստատելու մասին. Այդ պատճառով բայեստագը արձակուած է. Նոր ընտրութիւնները նշանակուած են փետրվարի 9/21-ին:

ՎԵՆՆԱ. Ամեն կողմերից ստացվում են խաղաղասիրական լուրեր. Հիմք կայ կարծելու, որ ռուսաց կառավարութիւնը նոր միջոցներ է առաջարկել պետութիւնների մէջ բոլղարական խնդրի վերաբերմամբ համաձայնութիւն կայացնելու համար:

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾՕԿՕԼԱԴ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

(Ц. 4657) 51—44

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ՀԱՅՈՑ ՄԻԱԿ ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ
ԹԻՓԼԻՍՈՒՄ

ԱՌԱՋԻԿԱՅ 1887 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Չորրորդ տարի)

Կը հրատարակուի նոյն չերչով և ծրագրով

Տարեկան գինն է 10 րուբլի, վից ամսուան՝ 6 րուբլի, Հատով՝ 5 կոպ.
Եւրոպայի և Փերբիայի բաժանորդները վճարում են 30 Ֆրանկ:
Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից:
Թիֆլիսում բաժանորդ են գրվում Ֆիֆոյ «Նոր-Դար»-ի խմբագրատանը:
Խմբագրատունը գտնվում է պօստատան հանը, Տրոյիցկից փողոցի վերայ, Սամեբա (Տրօյցկայա) եկեղեցու հանդէպ, տուն № 9:
Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ или Tiflis (Caucase) Rédaction «Nor-Dar».

Подписка единственной ежедневной армянской газеты «НОРЪ-ДАРЪ» принимается исключительно въ конторѣ Редакціи Тифлисъ, въ центрѣ города, за Почтой на Тройцкомъ переулкѣ, въ домѣ № 9.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱՏԱՅԻՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէյլի և Բաթումի մէջ:

Շաբաթ, յունվարի 7-ին, «ՄԻՆԳՐԵԼԻԱ» (Mingrélie) շոգենաւը, նաւապետ «ԺԻՐՈՒԻՆ» (Jiboin) գուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ:

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին Բաթումում՝ ալ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ ալ. ՐԻՆՕԻՆ, նախկին գաղթեղբայր Սէթրաևների № 103. 3—3

Дозволено цензурою Тифлисъ 3-го Января 1887 г. Տպարան Մ. Գ. Փոսիկեանցի Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр., д. № 41